ԿԱՐԾԻՔ

Ը.00.02 «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՎԱՐՍԵՆԻԿ ԿԱՐԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման վճռորոշ պայմաններից մեկը տնտեսության արդյունավետ գործառնումն է, որը կարող է երաշխավորվել առևտրային կազմակերպությունների արդյունավետ գործունեության կազմակերպմամբ:

Շուկայական տնտեսության ձևավորման և կառուցման հիմնական ինստիտուտներից է առևտրային կազմակերպությունների սնանկության գործընթացի պետական կարգավորումը, որն իրականացվում է համապատասխան իրավական ակտերի և այդ գործընթացը սպասարկող ենթակառուցվածքների միջոցով:

Վերջին տարիների վիճակագրական տվյալները վկայում են այն մասին, որ ՀՀ-ում բավականին մեծ թիվ են կազմում սնանկության գործընթացում գտնվող առևտրային կազմակերպությունները: Ընդ որում դրանց ճնշող մեծամասնությունը ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպություններն են: 2020թ. սկսված կորոնավիրուսային համաճարակն էլ ավելի է խորացնելու առևտրային կազմակերպություններում առկա անվճարունակության խնդիրները, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ մեր երկրում:

Վերը թվարկված հանգամանքները պահանջում են խորքային հետազոտությունների իրականացում, որոնք նպատակաուղղված պետք է լինեն առևտրային կազմակերպությունների սնանկության կանխարգելմանը և նրանց ֆինանսատնտեսական գործունեության առողջացմանը, գոյություն ունեցող ինսիտուտների բարելավմանը, ինչպես նաև նորարարական կառուցակարգերի մշակմանը և կիրառմանը:

Ելնելով այս ամենից՝ գտնում եմ, որ թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է շուկայական տնտեսության առանցքային ինստիտուտներից մեկի՝ առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության ապահովման կազմակերպատնտեսական կառուցակարգերի ու մեթոդների և սնանկության կանխարգելման հիմնական եղանակների, ինչպես նաև սնանկության ընթացակարգերի արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկությունների և միջոցառումների մշակումը:

ՀՀ առևտրային կազմակերպությունների սնսնկության կանխարգելման, ինչպես նաև սնանկացման կառավարման արդյունավետ մեթոդների ու կառուցակարգերի մշակման նպատակով առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- համակողմանի վերլուծելով սնանկության ողջ գործընթացը՝ քննության առնել առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական իրավիճակի քանակական բնութագրերը՝ ելնելով սնանկացման տնտեսաիրավական կարգավորումների ու հակաճգնաժամային կառավարման արդյունքներից,
- վեր հանել առևտրային կազմակերպությունների անվճարունակության և սնանկության տնտեսաիրավական կարգավորման հիմնահարցերը,
- հիմնավորել առևտրային կազմակերպությունների սնանկության կանխարգելման ու կառավարման կատարելագործման հիմնուղիները ֆինանսական կայունության վրա ազդող գործոնների գնահատմամբ,
- իրականացնել ՀՀ առևտրային կազմակերպությունների որոշակի ընտրանքի համար սնանկության առաջացման քանակական գնահատումներ, մասնավորապես՝ ըստ սնանկության հավանականության բացահայտմամն չափանիշի:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսը հետազոտության ընթացքում ստացել է գիտագործնական նշանակության արդյունքներ, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- բացահայտվել է փոքր բաց տնտեսությունների համար համաշխարհայնացման և ինտեգրման, ճգնաժամի (այդ թվում COVID-19-ով պայմանավորված) պայամններում կազմակերպությունների սնանկության հիմնահարցերը,
- բացահայտվել է կազմակերպությունների սնանկության ֆունկցիոնալ դերակատարումը դրա ծագումնաբանության և դրսևորման

առանձնահատկությունների դիտարկման, սնանկության կանխարգելման հայրենական և միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա,

- համակարգված կերպով ներկայացվել են կազմակերպությունների սնանկության պատճառները, դրսևորման ձևերն ու կանխարգելմանն ուղղված տնտեսահիրավական կարգավորումների հիմնական ուղղությունները, միջոցառումներն ու առողջացման ծրագրերը,
- մշակվել են սնանկության ախտորոշման ու կանխարգելման ուղղված ինստիտուտներ ու օրենսդրության բարելավման միջոցառումներ, որոնք կնպաստեն կազմակերպությունների անվճարունակության իմունիտետի բարձրացմանն ու սնանկության կառավարման բարելավմանը,
- ըստ սնանկության հավանականության չափանիշի վարկանշման մեթոդական մոտեցումների՝ ՀՀ կազմակերպությունների որոշակի ընտրանքի համար առաջարկվել է սնանկության կանխարգելման մեթոդական մոտեցումների էկոնոմետրիկ մոդելներին զուգահեռ ընդգրկել սնանկության հայտանիշների կարևորության գնահատման ու վարկանշավորման թեստային (տեղեկատվական կշիռների) և փորձագիտական մեթոդներ և մոդելներ, այդ թվում՝ ինտեգրալային գնահատում, բինարական պրոբիթ մոդել, համակցված մեթոդ, դիսկրետ մոդելավորում և ներքին վարկանիշավորում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ և ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության առաջին՝ **«Կազմակերպությունների սնանկության բացահայտման և կառավարման տեսամեթոդական հիմքերը»** գլխում քննարկվում են սնանկության տեսակները, ֆունկցիոնալ դերը շուկայական համակարգում, սնանկության կարգավորման միջազգային փորձը և կանխարգելմանն ուղղված մեթոդները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Կազմակերպությունների սնանկության տնտեսահիրավական կարգավորումների ու գնահատման մեթոդաբանակն հիմքը ՀՀ-ում»** գլխում ներկայացվում են կազմակերպությունների սնանկացման տնտեսահիրավական կարգավորման հիմնախնդիրները և ՀՀ սնանկության ինստիտուտի կատարելագործման հիմնական ուղիները:

Ատենախոսության երրորդ՝ **«Կազմակերպությունների սնանկության կառավարման կատարելագործման և գործոնների բացահայտման հիմնուղիները ՀՀ-ում»** գլխում իրականացվել է կազմակերպությունների ֆինանսական

կայունության ինտեգրալային գնահատում սնանկության ռիսկի կառավարման համատեքստում: Այս գլխում իրականացվել է նաև ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների հավանական սնանկացման վրա ազդող գործոնների գնահատում բինարակն պրոբիթ մոդելի օգնությամբ, ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների սնանկացման հավանականության համակցված մեթոդով գնահատում և կազմակերպությունների վարկանշավորում ֆինանսատնտեսական ցուցանիշների կարևորության աստիճանի գնահատմամբ:

Ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում ամփոփ ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ատենախոսության էջ 34-ում արված հղումը հուշում է, որ Աղյուսակ 3-ը կազմված է հեղինակի կողմից մասնագիտական տարաբնույթ վերլուծական աղբյուրների հիման վրա, սակայն աղյուսակում ներկայացված են միայն հայտնի /կարելի է ասել նույնիսկ՝ դասագրքային/ ցուցանիշներ և տրված են դրանց բնութագրերը, որում որևէ նոր բան կամ վերլուծություն առկա չէ, ատենախոսության տեքստում նույնպես որևէ վերլուծություն չի արվում կապված աղյուսակի հետ:
2. Վիճահարույց է հեղինակի ատենախոսության էջ 51-ի այն պնդումը, որ պարտավորությունների չափերի խնդրահարույց լինելու հանգամանքը ակնառու է դառնում, երբ այն համադրում ենք տվյալ տարվա արտաքին պետական պարտքի մեծության հետ: Կարծում եմ այդպիսի համադրումը ընդունելի կլիներ, եթե հեղինակի կողմից ներկայացվեր ՀՀ կազմակերպությունների պարտավորությունները արտասահմանյան գործընկերներին և այլ օտարերկրյա կառույցների կամ ՀՀ արտաքին պետական պարտքը հաշվարկվեր ոչ թե որպես ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի արտաքին պարքերի գումար, այլ առանձին բաղադրիչ լիներ նաև ՀՀ կազմակերպությունների արտաքին պարտքը: Սակայն հեղինակի կողմից որևէ նման հաշվարկ չի արվել, ուստի կարծում եմ ՀՀ արտաքին պետական պարտքի մեծությունը չի կարող ուղղակիորեն ակնառու դարձնել կազմակերպությունների պարտավորությունների չափերի խնդրահարույց լինելու հանգամանքը: Նշեմ նաև, որ դրան հաջորդող նախադասությունում առկա է տեխնիկական վրիպակ և ՀՀ արտաքին պետական պարտքի ընդհանուր չափը և ՀՀ կառավարության արտաքին պարտքի չափը նշված է նույն թիվը:

3. Ատենախոսության էջ 67-ում հեղինակը նշում է. «Անհրաժեշտ ենք համարում նաև սնանկության մասին օրենքում ավելացնել պարտատերերի անվճարունակության վերաբերյալ դրույթներ, ինչպես օրինակ՝ վարկային կազմակերպությունների, ապահովագրական կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և այլն: Սա հնարավորություն կտա պարտապաններին օրենքով սահմանված կարգով ավելի սեղմ ժամկետներում գալ ֆինանսական առողջացման, այսինքն՝ կշահի սնանկության ողջ գործընթացի արդյունավետությունը»: Այս առաջարկը արժեքավոր կլիներ, եթե հեղինակը հիմնավորեր և ներկայացներ հստակ մեխանիզմներ, թե ինչպես է օրենքում ավելացվող պարտատերերի անվճարունակության վերաբերյալ դրույթը ազդելու պարտապանների ֆինանսական առողջացման վրա: Օրինակ՝ ցանկալի էր ներկայացնել, թե ինչպես է, որպես օրինակ ատենախոսությունում նշված, անհատ ձեռնարկատեր պարտապանի վերաբերյալ օրենքում ավելացվող դրույթը հնարավորություն տալիս, օրինակ պարտապան հանդիսացող բաժնետիրական ընկերության ֆինանսական առողջացման, այն էլ սեղմ ժամկետներում: Կարծում եմ առաջարկը բավականին վիճահարույց է:
4. Ատենախոսությունում հեղինակի կողմից օգտագործվել են բավականին վիճակագրական տվյալներ, որը գովելի է, սակայն ոչ բոլոր դեպքերում են դրանց ժամանակաշրջանները ընտրված միասնական, գրեթե առկա չեն 2020թ. վիճակագրական տվյալներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտողությունները ամենևին չեն նսեմացնում հեղինակի կողմից կատարված մեծածավալ հետազոտությունը: Վարսենիկ Կարենի Սարգսյանի ատենախոսությունը իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն գիտագործնական նշանակություն և կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետությունում սնանկության կառավարման արդի հիմնախնդիրների լուծմանն ուղղված քաղաքականության մշակման գործընթացներում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են գիտական ամսագրերում՝ համապատասխան գիտական հոդվածներով: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի հիմնական դրույթներն ու արդյունքները:

Վարսենիկ Կարենի Սարգսյանի «Սնանկության կառավարման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում (Ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների օրինակով)» ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին, թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍ

Տնտեսագիտության թեկնածու **Ն.Հ.Հարությունյան**

Նաիրի Հարությունյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԿԳՄՍՆ

Գլխավոր քարտուղարի տեղակալ **Վ.Գասպարյան**

17.11.2020